



ԵՐԱԿՈՇԱՔԹԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2018

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.  
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:  
Ամբողջութեամբ մաքրէ վիս իմ անօրէնութենէս. եւ իմ մեղքես վիս սրբէ:  
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չ'ելլեր:  
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,  
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:  
Ուստի ներումիդ ցօղով սրբէ վիս, եւ պիտի մաքրուիմ,  
լուա վիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:  
Ցնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,  
եւ փառապած ոսկորներս պիտի ցնծան:  
Նկատի մի՛ առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:  
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ո՛վ Աստուած,  
նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:  
Ներկայութենէդ մի՛ վրկեր վիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ վիս:  
Փրկութեանդ ցնծութիւնը Կուր ինձի՛  
եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:  
Որպէսպի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ,  
եւ մեղաւորները քեզի դառնան:  
Բաց իմ շրթներս, ո՛վ Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:  
Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մատուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուկեր:  
Ուլած զոհդ զղջումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած,  
հետեւաբար մի՛ մերժեր զղջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուա Փրկիչ մեզ ողորմեա:  
Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ

ԳԼՈՒԽ 3:7-10

## ՄԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐՂԻՆԵՐՆ ԵՆՔ (3:7-10)

Պօղոս Առաքեալ գեղեցիկ կերպով կը ներկայացնէ երբ կ'ըսէ. «**Աստուծոյ Հոգին պէտք է ունենայ, որպէսզի Աստուծոյ պարագամները հասկնանք**», որովհետեւ Աստուծոյ Հոգիով ներշնչուած գրուեցան այս պարագամները: Անոր համար ալ յաճախ երբ կը դժուարանանք հասկնալու Աստուածաշնչական հասկումներ, կ'աղօթենք որպէսզի Աստուած դրկէ Իր Սուրբ Հոգին, որպէսզի մեր մտքերը բանայ ըստ այնմ հասկնալու: Բայց նաեւ հարցը կը վերաբերի ոչ թէ միայն հասկնալու, այլ այդ հասկցուածը գործադրելու, ահա այն արեւն է դժուարին պարագան: Ինչպէս օրինակ, Յովհաննէս Առաքեալ Ընդհանրական նամակը:

Յովհաննէս Առաքեալ շարունակէ իր միտքը, թէ ինչպէս կոչուած ենք Աստուծոյ որդիները ըլլալու, եթէ կոչուած ենք, ուրեմն նաեւ կոչուած ենք մեղք չգործելու, որովհետեւ «**Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր, իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք փեսած ու ճանչցած չէ**» (6 հմբ): Քրիստոսը փեսանելու եւ ճանչնալու հասկացողութիւնը անոր համար, որ Քրիստոսի մէջ ճանչնալու Անոր կարարած փրկագործական ծրագիրը, որուն համար կ'ըսէ Առաքեալը. «**Քրիստոս աշխարհ եկաւ՝ մեր մեղքերը ջնջելու համար**» (5 հմբ):

Յովհաննէս Առաքեալ այս նիւթը կ'արծարծէ, որովհետեւ կային այնպիսի ուսուցումներ, աղանդաւորական շարժումներ, որոնք «մեղքի» նկարմամբ անտարբեր էին, որպէսզի թէ անգամ մը որ Քրիստոսով արդարացած ենք, ալ մեղքին մասին շար չմտնենք, որովհետեւ Քրիստոս եկաւ մեր մեղքերը ջնջեց: Միւս կողմէ, քանի մեր հոգիները արդարացած են Քրիստոսով, ուրեմն մեր մարմինները ինչպէս որ կ'ուզենք ըստ այնմ կ'ապրինք: Բայց Առաքեալը կու գայ եւ կը զգուշացնէ ըսելով. «**Թող ռեւէ մէկը ձեզ չխաբէ**» (7 հմբ), որովհետեւ, «**ով որ մեղք կը գործէ՝ Սաքանային հետեւորդ մըն է**» (8 հմբ): Ասով Առաքեալը յարակօրէն ցոյց կու տայ թէ կարելի չէ Քրիստոսի միացած ըլլալ, եւ միեւնոյն ժամանակ մեղքի մէջ ըլլալ: «**Ով որ մեղք կը գործէ՝ Աստուծոյ Օրէնքը կը խախտէ**», առաւել եւս «**Սաքանային հետեւորդն է**»: Այլապէս, մենք զմեզ հակասած կ'ըլլանք ու խաբած: Անոր համար ալ կ'աւելցնէ եւ կ'ըսէ. «**Ով որ արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս Քրիստոս ինք արդար է**» (7 հմբ): Կը նշանակէ, որ բաւարար չէ արդարանալ եթէ երբեք արդար կեանք չենք ապրիր: Այո, Քրիստոս աշխարհ եկաւ մեզ արդարացնելու համար, բայց նաեւ պէտք է որ արդար կեանք մը ապրինք, որպէսզի անով ճանչցուինք որ Աստուծոյ զաւակներն ենք, այլապէս՝ ոչ: Այլ խօսքով, ընել կը նշանակէ՝ ըլլալ: Եթէ արդարութիւն կ'ընեն, ուրեմն՝ արդար են:

Յովհաննէս Առաքեալ կու գայ ցոյց տալու, որ մարդ արարածը նախքան Աստուծոյ զաւակ դառնալը, մեղքին ծառան ու Չարին հետեւորդն է: Ահա ճիշդ արոր համար է, որ Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ՝ Սաքանային գործունէութեան վերջ դնելու համար (8 հմբ): Քրիստոս Իր խաչելութեամբ եկաւ վերջ դնելու Չարին գործունէութեան: Այդ վերջ դնելու հանգամանքը Աստուած սկիզբէն ցոյց տուաւ երբ կը կարդանք Ծննդոց 3, ուր Աստուծոյ փուստ դաբաւորանին համաձայն կնոջ եւ քու միջեւ, անոր սերունդին ու քու սերունդիդ միջեւ թշնամութիւն պիտի դնեն, ան քու գլուխդ պիտի ջախջախէ, դուն ալ անոր գարշապարը խայթես: Այս ըսելով, Յովհաննէս Առաքեալ ցոյց կու տայ, թէ ի՞նչ է մեղքը եւ ուրկէ՞ կու գայ: Մեղքը Աստուծոյ Օրէնքին խախտումն է, որ կու գայ չարին ականջ տալէն, որովհետեւ անիկա սկիզբէն ի վեր մեղք կը գործէ, եւ նոյնը թելադրեց մարդուն: Ահա այդ գործունէութեան վերջ տալու համար Քրիստոս աշխարհ եկաւ: Որպէսզի, «**Ով որ Աստուծոյ զաւակ դարձած է՝ մեղք չի գործեր, որովհետեւ Աստուծոյ կեանքին հաղորդակից կը մնայ: Այլեւս կը դադրի մեղանչելէ, քանի Աստուծոյ զաւակ կը դառնայ**» (9 հմբ): Սա կը նշանակէ, որ այլեւս մեղքը փեղ չունի ու չի կրնար ունենալ մեր կեանքին մէջ: Օրինակ, Յովսէփ գեղեցիկի պարագան: Եւ ահա այնպէս ինչպէս Աստուած մեղքը կ'արէ, նոյնպէս ալ Աստուծմէ ծնած մարդը, մեղքը կ'արէ: Ընդհանրապէս, որ Աստուծոյ զաւակը իր խօսքը ուղղելով Եփեսացիներուն կ'ըսէ. «**Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի դէմ դնէք Չարին արձակած միացող նետերուն**» (Եփես 6:11): Ամենօրեայ պարերագմի մէջ ենք, բայց մեր կոչումն է, բարի պարերագմը պարերագմելու, հաւատքը պահելու եւ ընթացքը իր աւարտին հասցնելու: Այո, մեղքը հոն է, բայց այլեւս իշխանութիւն չունի: Առիւծի մը պէս կը մոնչէ, բայց պաշտպանուած են Քրիստոսով:

Սա նշան է յարակ զանազանութեան Աստուծոյ որդիներուն եւ Սաքանային որդիներուն: Չկայ միջին, կամ Աստուծոյ որդիներն ենք, կամ Չարին որդիներն ենք, ինչպէս պիտի ըսէ Քրիստոս Յովի 8:34-47: Վերադառնալով նոյն մտքին. «**Ով որ արդարութիւն չի գործեր՝ Աստուծոյ որդին չէ. ով որ իր եղբայրը չի սիրեր՝ նոյնպէս Աստուծոյ որդի չէ**» (10 հմբ): Համարժէք, համագոր արտայայտութիւն, արդարութիւն գործել եղբայրսիրութիւն: Որովհետեւ սերը ամբողջ շաղախն է լրումն է արդարութեան: Այնպէս ինչպէս Աստուած Ինք սեր է ու կը սիրէ, ու սիրեց, նոյնպէս ալ Անկէ ծնածները: Այլապէս Աստուծոյ որդիները չենք: